տարկութիւնը, իմ մտաւոր աղքատութիւնը: Եւ նա շատ անգամ նկատում էր ինձ, թէ «քեզ պէտք է դեռ շատ բան սովորել» ...

Ինձանից շատ հեռու չէր խնձորենին, որի տերեւների սօսափիւնը ընդհատեց իմ մտածութիւները: Ես նայեցի դէպի այն կողմը: Ծառերի վրայ նկատեցի նոյն աղջկան, որ ճաշի ժամանակ մեզ համար սեղան էր պատրաստում: Դա Ծովիկն էր, նաւավարի աղջիկը: Ահա մի էակ եւս, որ ինձ նման արթուն էր, որի վրայ օրոայ ջերմութիւնը չէր ազդում: Բայց ի՞նչ էր շինում այդ մանկահասակ արարածը այն ծառի վրայ: Կապիկը միայն կարող էր այնպէս համարձակ մի ոստից միւսը թռչել: Պտուղներ չէր քաղում նա. խնձորները դեռ ոչ բոլորովին հասած էին: Նա ընտրում էր նրանցից խոշորները, իրանց ձեւով կանոնաւորները եւ ինչ-որ կպցնում էր նրանց վրայ: Ես իսկոյն հասկացայ այդ գործողութեան նպատակը: Խնձորներն այն տեսակից էին, որ հասունացած ժամանակ ստանում էին սաստիկ մուգ-կարմիր գոյն, իսկ այժմ դեռ բաց-կապտագոյն էին: Նա կպցնում էր նրանց վրայ զանազան ձեւով մանր եւ գեղեցիկ տերեւներ: Խնձորները հասունացած ժամանակ, շատ հասկանալի է, որ նրանց մակերեւոյթի բաց մնացած տեղերը արեւից կը ստանան կարմիր գոյն, իսկ տերեւներով ծածկուած տեղերը կը մնան սպիտակ գոյնով, եւ այսպիսով նրանց վրայ կը ձեւանան զանազան նկարներ: Այդ տեսակ նախշուն, հոտաւէտ խնձորները կոչւում են «սիրականի խնձորէ: Առհասարակ խնձորը հայոց մէջ սիրոյ նշան է: Հարսանիքների ժամանակ, ումը որ կամենամ են հրաւիրել, մի հատ կարմիր խնձոր են ուղարկում նրան: Իսկ այդ տեսակ նախշուն խնձորները մեծ աղջիկները ծածուկ ուղարկում են սիրած պատանիներին: Բայց ո՞ւմ համար էր պատրաստում այդ փոքրիկ աղջիկը իր խնձորները: Նա, անտարակոյս, դեռ չգիտէր, թէ ի՞նչ էր սէրը: Երեւի նա տեսել էր, թէ ինչ են անում մեծ աղջիկները, ինքն էլ հետեւում էր նրանց օրինակին, առանց հասկանալու իր պատրաստութեան նշանակութիւնը: «ահայ մի անգիտակցութիւն եւս, մտածեցի ես, նա դեռ չսիրած, սիրոյ համար նոէրներ է պատրաստում»... Միթէ՞ ես էլ նոյնը չէի անում... միթէ՞ ես էլ սիրոյ համար զոհեր չէի պատրաստում, առանց իմ սիրոյ առարկայի հետ ծանօթ լինելու... Բայց Ծովիկը ինձանից խելացի էր. նա գոնէ ընտրում էր խնձորներից այն միայն, որը աւելի գեղեցիկ էր, որը փտած կամ որդնակեր չէր: Իսկ ես այդ ընտրութիւնը չունէի, ես չգիտէի, թէ իմ զոհաբերութիւները որ աստիճան նպատակայարմար են... Ես հետեւում էի միայն ինձանից մեծերի օրինակին, որպէս Ծովիկը հետեւում էր իրանից մեծերի օրինակին...

Յանկարծ սրահի մէջ բացոող դռնից դուրս վազեց մի փոքրիկ երեխայ: Դա երեւի մեր հիւրընկալի արու զաւակն էր, որովհետեւ սաստիկ նման